# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պռոշյան Անդրանիկի 13

## ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի-2017թ. թիվ 119

**ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 07-053-0078-0006-ԻՑ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ 0.0180 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. Մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. Մայիսի 18 N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետի դրույթներով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ 29-րդ, 30-րդ,48-րդ,53-րդ կետերի պահանջներով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. Դեկտեմբերի 24-ի N1887-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ շինությունը չի գտնվում ՀՀ <Հողային օրենսգրքի > 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում սերվիտուտ և չի հակասում քաղաքաշինական նորմերին

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացու կողմից 07-053-0078-0006-ից կադաստրային ծածկագրում 0.0180 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված 234.0 քմ ( արտաքին մակերեսով ) օժանդակ շինությունը և պարիսպը ճանաչել օրինական համայնքային սեփականություն:
2.Ըստ ներկայացվող հատակագծի, ինքնակամ կառուցված օժանդակ շինության սպասարկման համար 07-053-0078-0006-ից ծածկագրից առանձնացնել 0.0180 հա բնակավայրերի խառը կառուցապատման հողամաս և կազմել սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական:
3.Առանձնացվող հողամասին և նրա վրա կառուցված ավտոտնակին տալ Գ.Չաուշի խճուղի 5/30 հասցեն:
4. Նշված շինությունը ու նրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ համապատասխան հողամասը հետագայում օտարելու /վարձակալությամբ/ քաղաքացի Հայկուհի Ավդալյանին :
5. Հանձնարարել համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ. Ադամյանին վերահսկել որոշման կատարման ընթացքը:
6.Վկայականի պատրաստման անհրաժեշտ ֆին[illegible] կատարել համայնքի բյուջեից վերահսկողությունը դնելով գլխավոր մասնագ[illegible] Կ. [illegible] վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Անդրանիկի 13

# ՈՐՈՇՈՒՄ

06 հուլիս 2017թ. թիվ 118

ՇԵԻԼԱ ՌԱԵ ՊԱՊԱՅԱՆՍԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շեիլա Ռաե Պապայանսին սեփականության իրավունքով պատկանող կադաստրային ծածկագիր /07-053-0379-0005/ 0.5729 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասին տալ հետևյալ հասցե Գ.Չաուշի խճուղի թիվ 90 հասցե:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
3.Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ս.Ադամյանին սույն որոշումն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

03. հուլիսի 2017թ թիվ 117

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՎԵԼ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով դրամական օգնություն տրամադրելու նպատակով ներկայացված դիմումները և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջն ու Պռոշյան համայնքի աշխատանքի և սոցիալական ծառայության վերաբերյալ հարցեր քննող հանձնաժողովի եզրակացությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ներքոհիշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն

| | Անուն Ազգանուն | Գումարի չափ |
|---|---|---|
| 1 | Արթուր Եղիազարյան | 100.000 դրամ |
| 2 | Սուսաննա Կիրակոսյան | 20.000 դրամ |
| 3 | Շողակաթ Գյուլնազարյան | 50.000 դրամ |
| 4 | Վահե Հարությունյան | 30.000 դրամ |
| 5 | Ալբերտ Մկրտչյան | 50.000 դրամ |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | ընդամենը | 250.000 դրամ |

Համայնքի ղեկավար Ա.Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30. հունիսի 2017թ թիվ 118

## ՊՌՈՇՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԱ ԱՐԵՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 164-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արա Արեյանի դիմումն ու համայնքապետարանի աշխատակիցների 2017թ արձակուրդային գրաֆիկը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. 2017թ հուլիսի 3-ից Պռոշյան համայնքի ղեկավարի տեղակալ Արա Արեյանին տրամադրել 2017թ հերթական արձակուրդը ` 20 աշխատանքային օր: Աշխատանքի ներկայանալ 2017թ.-ի օգոստոսի 1-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար` Ա. Մուրադյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Անդրանիկի 13

## ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի-2017թ. թիվ 115

## ԶԱԲԵԼ ԲԱՐԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Զաբել Բարբարյանին սեփականության իրավունքով պատկանող կադաստրային ծածկագիր /07-053-0378-0129/ 0.05 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանումից՝ թիվ 1 բաժանվող 0.252 հա հողամասը և բնակելի տունը թողնել նույն հասցեով՝ Վանահովիտ թաղամաս թիվ 35 , իսկ թիվ 2 բաժանվող 0.0178 հա հողամասը և բնակելի տանը տալ հետևյալ հասցե՝ Վանահովիտ թաղամաս թիվ 35/1, թիվ 3 բաժանվող 0.0070 հա հողամասին և բնակելի տանը տալ հետևյալ հասցե Վանահովիտ թաղամաս թիվ 35/2 հասցե:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
3. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Աղամյանին սույն որոշումն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, (0224) 6-39-39, proshyan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

_30_ ՀՈՒՆԻՍ 2017 թվականի N __114___

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Ռուզան Հովսեփյան>> ԱՁ
2. <<Մարգարիտ Ղազարյան>> ԱՁ

համաձայն իրենց հայտերում նշված ժամանակահատվածի՝ 2017թ համար տրամադրել ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Յուրիկ Ոզգոյանի վրա:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պռոշյան Անդրանիկի 13

## ՈՐՈՇՈՒՄ

27 հունիսի 2017թ. թիվ 113

### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին >> Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29 N 1317-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Մովսիսյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Բավարարել քաղաքացի Արմեն Մովսիսյանի դիմումը և նրան տրամադրել Պռոշյան համայնք 6-րդ փողոց 11-րդ նրբանցք թիվ 11 հասցեի հողամասում բնակելի տան նախագծման թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017թ. հունիսի 27
Պռոշյան համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

27.06 .2017թ թիվ 112

### ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ,ՄՆՆԴԻ ՈՒ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ 2017Թ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-կետի և 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2017թ հունիսի 28-ին հսկողություն իրականացնել < Քարավան հոթել> և < Մոտոբլոկ> ՍՊԸ-ում իսկ հունիսի 29-ին <Ռուզան Հովսեփյան > ԱՁ-ում:
2. Որոշման կատարումը հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Յուրիկ Ռզգոյանին` ընդգրկել նաև Կարեն Աղամյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Ա. Մուրադյան